# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 59-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված տարածքիհատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 1/13 շենքի 1-ին հարկում գտնվող, 41.21 քմ մակերեսով հասարակական տարածքին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/13/49 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2020թ. մարտի 03
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 60-Ա

### ՏԱՐԱԾՔԸ ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Ռուբեն Վազգենի Ծատինյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 969209 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված վերաբաժանվող տարածքների հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Ռուբեն Վազգենի Ծատինյանին սեփականության իրավունքով պատկանող, քաղաք Ալավերդի Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/13 հասցեում գտնվող, 105 քմ մակերեսով հասարակական տարածքը վերաբաժանել 74.43 քմ և 30.56 քմ մակերեսների:
2. Վերաբաժանված 74.43 քմ մակերեսով հասարակական տարածքին տրամադրել համանք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/13-47 փոստային հասցե, իսկ 30.56 քմ մակերեսով հասարկական տարածքին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/13-48 փոստային հասցե:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 03
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 61-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 02.02.2002թ. N 88 որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետով, հիմք ընդունելով Ռոզա Սերգեի Մաճկալյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի վկայականի պատճենը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ռոզա Սերգեի Մաճկալյանին սեփականության իրավունքով պատկանող համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, N 14/2 հասցեում գտնվող բնակարանում կատարված 5 հատ դռան, 1 հատ պատուհանի ձևափոխությունները, 8 հատ միջնորմի կառուցումը, 3 հատ միջնորմի քանդումը համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետի ճանաչել օրինական:
2. Օրինականացված ձևափոխված դռների, պատուհանի, միջնորմների համար սահմանված վճարներն ընդհանուր՝ 18700 (տասնութ հազար յոթ հարյուր) դրամ գումարի չափով, սահմանված ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Փոփոխել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, N 14/2 հասցեում գտնվող, Ռոզա Սերգեի Մաճկալյանին սեփականության իրավունքով պատկանող, 42.1 քմ մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը և այն հաշվառել հասարակական նշանակության՝ որպես ատամնաբուժարան օգտագործելու:

4. Շինության գործառնական նշանակությունը փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ կատարված շինարարական աշխատանքները, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման, դասակարգվում են շինարարական ցածր ռիսկայնության աստիճանի (գտնվում են շինարարական աշխատանքների ռիսկայնության առաջին գոտում), ուստի, միջնորմների փոփոխությունների արդյունքում կատարված ձևափոխությունները շինարարության թույլտվություն չեն պահանջում:
5. Նշված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2020թ. մարտի 04
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 62-Ա

### ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 917-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 962-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Ալավերդու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 05.03.2020 թվականի թիվ 1 արձանագրությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի Աքորի գյուղի 2/10 հասցեի բնակիչ Ալեքս Սասունի Սարգսյանին /ծնված՝ 31.01.2019 թվականին/ ճանաչել առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 06
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 63-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ- ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ, 67-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 27.02.2020թ. N 8-Ն, N 9-Ն և N 10-Ն որոշումները, համայնքային սեփականության իրավունքի վկայականները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Թույլատրել կատարելու համայնքի վարչական տարածքում գտնվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ-վաճառք կառուցապատման նպատակով՝ համապատասխան մեկնարկային գներով, 15000 դրամ աճուրդի մասնակցության վճարով և մեկնարկային գնի5% քայլի չափով.
   1.1 Ալավերդի համայնք, Ալավերդի քաղաք, Թումանյան փողոց, N 75/3 հասցեում գտնվող, 06-002-0037-0024 ծածկագրով հասարակական կառուցապատման 0.0073 հա մակերեսով հողամասը՝ հասարակական օբյեկտ կառուցելու համար, 438000 դրամ մեկնարկային գնով:
   1.2 Ալավերդի համայնք, Ալավերդի քաղաք, Սողոմոն Թեհլերյան փողոց, N 1/2 հասցեում գտնվող, 06-002-0012-0080 ծածկագրով, հասարակական կառուցապատման 0.004 հա մակերեսով հողամասը՝ հասարակական օբյեկտ կառուցելու համար, 200000 դրամ մեկնարկային գնով:

1.3 Ալավերդի համայնք, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/33-49/3 հասցեում գտնվող, 06-002-0060-0005 ծածկագրով, բնակելի կառուցապատման 0.0036 հա մակերեսով հողամասը՝ ավտոտնակ կառուցելու համար, 108000 դրամ մեկնարկային գնով:

2. Վերը նշված հողամասերի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:

3. Բոլոր վճարումները կատարել ՀՀ արժույթով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2020թ. մարտի 06

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 64-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ, ՎՃԱՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՔԱՅԼԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 27.02.2020թ. N 12-Ն որոշումը, համանքի սեփականության իրավունքի վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Թույլատրել կատարելու համայնքի սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնք, գ. Հաղպատ, 28-րդ փողոց, թիվ 13/1 հասցեում գտնվող, 1274.33 քմ մակերեսով կիսակառույց շինության և 0.14724 հա մակերեսով զբաղեցրած հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքի մրցույթ:
2. Սահմանել վարձակալության տարեկան մեկնարկային վճար՝ 50000 դրամ, մրցույթի մասնակցության վճար՝ 15000 դրամ, քայլի չափ՝ մեկնարկային վճարի 5%-ի չափով:
3. Կիսակառույց շինությունը և զբաղեցրած հողամասը վարձակալության իրավունքով տրամադրել 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2020թ. մարտի 06
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 65-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 21.01.2020թ. N 11-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 26022020-06-0044 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Վալերի Վանուշի Աբելյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, N 2/17-1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 21.01.2020թ. N 11-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 57.3 քմ արտաքին մակերեսով (51.5 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 63030 (վաթսուներեք հազար երեսուն) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00384 հա մակերեսով հողամասը՝ 31104 (երեսունմեկ հազար հարյուր չորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Վալերի Վանուշի Աբելյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 06
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 66-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13.02.2020 Թ. N 38-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 13.02.2020թ. «06-002-0108-0011 ծածկագրում գտնվող, Գևորգ Վարդանի Էվոյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տան, տնամերձ հողամասի և համատեղ բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, օրենքի ուժով սեփական համարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 38-Ա որոշման վերնագրի մեջ և 1-ին կետում «06-002-0108-0011» թվերի փոխարեն կարդալ «06-002-0104-0011» թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2020թ. մարտի 06
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 67-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԲԷՑ» ՓԲԸ-ի դիմումը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

«ԲԷՑ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդիքաղաքի Սանահին թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0202-0078), 0.01426 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, N 202/78 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2020թ. մարտի 06
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 68-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 29.01.2020թ. N 21-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 26022020-06-0056 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Լյովա Անդրանիկի Ջամալյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, N 1/3/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 29.01.2020թ. N 21-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 55.92 քմ արտաքին մակերեսով (49.9 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 61512 (վաթսունմեկ հազար հինգ հարյուր տասներկու) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00308 հա մակերեսով հողամասը՝ 24948 (քսանչորս հազար ինը հարյուր քառասունութ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Լյովա Անդրանիկի Ջամալյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 06
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 69-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով «ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի 21.01.2020թ. N 1/փ-8 դրական եզրակացությունը, համայնքի ավագանու 27.02.2020թ. N 11-Ա որոշումը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-002-0050-0148 ծածկագրով 0.01368 հա մակերեսով անտառային նպատակային նշանակության անտառների գործառնական նշանակության հողատեսքը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի:
2. Նշված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ նշված հողատեսքի փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում՝ համայնքի հողային հաշվեկշռում փոփոխություններն ընդգրկելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 06
ք. Ալավերդի